«ԴԱՍԱՎԱՆԴԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ.

PROGRESS AUDIT

ԵՐԵՎԱՆ 2017

AUDIT & CONSULTING

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա ԱԾ N 081՝ տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Անկախ Աուդիտորի Եզրակացություն

«Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, ղեկավարության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

22 Մարտի 2017թ.

Խաչիկ Բեգլարյան

Գլխավոր տնօրեն

Ռաֆֆի Քալաջյան

Խմբի ղեկավար-աուդիտոր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2016թ.

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	*31 դեկտեմբեր 2016*	*31 դեկտեմբեր 2015*
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,035	-
		1,035	-
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	448	
Դրամական միջոցներ	6	44,708	
		45,156	
Ընդամենը ակտիվներ		**46,191**	
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	1,035	
		1,035	
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	342	
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	44,814	
		45,156	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**46,191**	

Լարիսա Վիրաբյան
Գործադիր տնօրեն

Զարուհի Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 02.03.2017թ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրատվություններ			
Եկամուտներ շնորհներից	10	116,315	-
Ծրագրային ծախսեր	11	(116,315)	-
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	12	-	-
Տարվա զուտ արդյունք			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Լարիսա Վիրջինիա Ռարման
Գործադիր տնօրեն

Զարուհի Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից		
Դրամաշնորհներից	161,552	-
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**161,552**	**-**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութեր, ապրանքների ձեռք բերման գծով	(28)	-
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(18,615)	-
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,115)	-
Վճարումներ բյուջե	(489)	-
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	-	-
Դրամական օգնություն	(95,142)	-
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**(116,389)**	**-**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***45,163***	**-**
Ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	-	-
Ներդրումային գործունեությունից ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(680)	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	**(680)**	**-**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(680)***	**-**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ֆինանսավորման այլ գործունեությունից մուտքեր	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ֆինանսավորման այլ գործունեությունից ելքեր	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	44,483	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	225	-
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	-	-
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**44,708**	**-**

Լարիսա Վիրջինիա Մարյան
Գործադիր տնօրեն

Զարուհի Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: